ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2014թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԿԱԶ ՇԱՀԻՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2- րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն պետական, քաղաքական գործիչ, գեներալ-լեյտենանտ Հայկազ Շահինյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Աբովյան փողոց 17 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԿԱԶ ՇԱՀԻՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պետական, քաղաքական գործիչ, գեներալ-լեյտենանտ Հայկազ Սրապիոնի Շահինյանը ծնվել է 1924թ. հունվարին 19-ին Երևանում:

1941թ. ավարտել է Պուշկինի անվան միջնակարգ դպրոցը:

1942թ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

1948թ. զորացրվելուց հետո աշխատանքի է անցել Երևանի ճշգրիտ սարքերի գործարանում՝ որպես կադրերի տեսուչ, որտեղից 1951թ. գործուղվել է Պետական անվտանգության կոմիտե, 18 տարի աշխատելուց հետո դարձել է Պետական անվտանգության կոմիտեի նախագահի տեղակալ:

1969թ. նշանակվել է Հանրապետության ներքին գործերի նախարարի 1-ին տեղակալի պաշտոնում:

1971թ. նրան շնորհվել է գեներալ-մայորի կոչում:

1977-83թթ. զբաղեցրել է Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնը, իսկ 1983-1988թթ.՝ ներքին գործերի նախարարի պաշտոնը, 1985թ. շնորհվել է գեներալ-լեյտենանտի կոչում:

Մահացել է 1993 թ.:

Երկարատև անբասիր աշխատանքի համար Հայկազ Շահինյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով, մի շարք մեդալով, պատվոգրերով, բազմիցս ընտրվել է շրջանային, քաղաքային խորհրդի պատմագավոր, իսկ 1985թ. Արարատի շրջանի ընտրական օկրուգից ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 11-րդ գումարման պատգամավոր:

Հ. Շահինյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևան քաղաքի Աբովյան փողոց 17 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել «Սուրմալու–Իգդիր» հայրենակցական-բարեգործական միավորման նախագահ Լյուդվիգ Սարգսյանի կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԿԱԶ ՇԱՀԻՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայկազ Շահինյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԿԱԶ ՇԱՀԻՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայկազ Շահինյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ